



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2018 թվականի մարտին (վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է հիմք ընդունելով 2018 թվականի մարտ ամսվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները, անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված վերլուծական տվյալները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ


1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.2018 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14258 իրավունքների պետական գրանցման գործարքներ:

2009-2018 թվականների մարտ ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում.

Գծապատկեր 1.1-1


Մարտ ամսվա ընդհանուր գործարքները ըստ տարիների




1.1.2 Հանրապետությունում 2018 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 36.0%, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.8%:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված են 2018 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3



Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-1


	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Երևան	4267	20.2%	5129	13.7%	4512
Արագածոտն	654	14.1%	746	17.7%	634
Արարատ	788	61.4%	1272	2.3%	1243
Արմավիր	894	21.5%	1086	1.6%	1069
Գեղարքունիք	768	41.0%	1083	27.4%	850
Լոռի	640	83.4%	1174	42.8%	822
Կոտայք	1265	30.5%	1651	8.5%	1522
Շիրակ	748	-9.0%	681	-5.5%	721
Սյունիք	516	9.9%	567	-5.2%	598
Վայոցձոր	329	-21.0%	260	8.8%	239
Տավուշ	499	22.0%	609	23.0%	495
Հանրապետություն	11368	25.4%	14258	12.2%	12705

2018 թվականի մարտին հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 12.2 %-ով, իսկ 2017 թվականի մարտի համեմատ՝ 25.4 %-ով: Երևան քաղաքում 2018 թվականի մարտին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 13.7 %-ով, իսկ 2017 թվականի մարտի համեմատ՝ 20.2 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2018 թվականի մարտին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 11.2 %-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 9.9%-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2018 թվականի մարտին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 11.6 %-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 43.1 %-ով:


1.1.3 Հանրապետությունում 2018 թվականի մարտին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.1% գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.9% օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-4-ում և Գծապատկեր 1.1-5-ում ներկայացված են 2018 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ տեսակների:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ
ՏՈԿՈՍԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ



Հանրապետությունում ընդհանուր գործարքների քանակական
բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին, հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	Օտարում	3979	29.5%	5154	8.0%	4771
1ա	Առուվաճառք	2862	26.2%	3611	6.4%	3393
1բ	Նվիրատվություն	1108	23.6%	1369	10.7%	1237
1գ	Փոխանակում	9	11.1%	10	-9.1%	11
1ե	Օտարման այլ տեսակ	-	-	164	26.2%	130
2	Վարձակալում	721	14.8%	828	12.8%	734
3	Գրավադրում	2121	22.4%	2596	34.0%	1938
4	Ժառանգում	1694	24.1%	2103	-3.0%	2167
5	Օրինականացում	81	65.4%	134	20.7%	111
6	Առաջնայինգրանցում	2011	16.1%	2335	22.7%	1903
7	Պետգր. /վերագրանցում/	761	45.6%	1108	2.5%	1081
Ընդամենըգործարք		11368	25.4%	14258	12.2%	12705

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների:


Աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Օտարում	5154	36.1%	2039	39.8%	39.6%	1152	33.7%	22.4%	1963	34.4%	38.1%
1ա	Առուվաճառք	3611	25.3%	1437	28.0%	39.8%	811	23.7%	22.5%	1363	23.9%	37.7%
1բ	Նվիրատվություն	1369	9.6%	494	9.6%	36.1%	303	8.9%	22.1%	572	10.0%	41.8%
1գ	Փոխանակում	10	0.1%	4	0.1%	40.0%	2	0.1%	20.0%	4	0.1%	40.0%
1ե	Օտարման այլ տեսակ	164	1.2%	104	2.0%	63.4%	36	1.1%	22.0%	24	0.4%	14.6%
2	Վարձակալություն	828	5.8%	451	8.8%	54.5%	156	4.6%	18.8%	221	3.9%	26.7%
3	Գրավադրում	2596	18.2%	1413	27.5%	54.4%	639	18.7%	24.6%	544	9.5%	21.0%
4	Ժառանգություն	2103	14.7%	482	9.4%	22.9%	477	13.9%	22.7%	1144	20.0%	54.4%
5	Օրինականացում	134	0.9%	37	0.7%	27.6%	34	1.0%	25.4%	63	1.1%	47.0%
6	Առաջնայինգրանցում	2335	16.4%	389	7.6%	16.7%	739	21.6%	31.6%	1207	21.1%	51.7%
7	Պետգր. /վերագրանցում/	1108	7.8%	318	6.2%	28.7%	225	6.6%	20.3%	565	9.9%	51.0%
Ընդամենըգործարք		14258	100.0%	5129	100.0%	36.0%	3422	100.0%	24.0%	5707	100.0%	40.0%


1.1.4 Հանրապետությունում 2018 թվականի մարտին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 34.3% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.8% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-6-ում և Գծապատկեր 1.1-7-ում ներկայացված են 2018 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-6



Գծապատկեր 1.1-7



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2018 թվականի մարտին, հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	բազմաբնակարան շենքի բնակարան	3584	19.8%	4295	16.0%	3704
2	անհատական բնակելի տուն	2491	16.9%	2911	3.4%	2816
3	արտադրական նշ. շին	475	-15.4%	402	26.4%	318
4	հասարակական նշ. շին.	1102	22.6%	1351	17.9%	1146
5	ավտոտնակ	317	29.3%	410	-4.2%	428
6	հող	3399	43.8%	4889	13.9%	4293
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1957	57.1%	3074	12.4%	2734
	Ընդամենը	11368	25.4%	14258	12.2%	12705

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Աղյուսակ 1.1-5


Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բազմաբնակարան շենքի բնակարան	4295	30.1%	3002	58.5%	69.9%	1211	35.4%	28.2%	82	1.4%	1.9%
2	անհատական բնակելի տուն	2911	20.4%	693	13.5%	23.8%	737	21.5%	25.3%	1481	26.0%	50.9%
3	արտադրական նշ. շին	402	2.8%	159	3.1%	39.6%	76	2.2%	18.9%	167	2.9%	41.5%
4	հասարակական նշ. շին.	1351	9.5%	731	14.3%	54.1%	413	12.1%	30.6%	207	3.6%	15.3%
5	ավտոտնակ	410	2.9%	316	6.2%	77.1%	77	2.3%	18.8%	17	0.3%	4.1%
6	հող	4889	34.3%	228	4.4%	4.7%	908	26.5%	18.6%	3753	65.8%	76.8%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3074	21.6%	27	0.5%	0.9%	408	11.9%	13.3%	2639	46.2%	85.8%
	Ընդամենը գործարք	14258	100.0 %	5129	100.0 %	36.0%	3422	100.0 %	24.0%	5707	100.0 %	40.0%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն՝ 21.4%, իսկ ցածրը 0.6% Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 1.2-1




Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:

Վարչական շրջան	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Դավթաշեն	196	32.7%	260	-2.3%	266
Էրեբունի	290	26.6%	367	16.5%	315
Աջափնյակ	407	4.4%	425	17.1%	363
Ավան	176	30.1%	229	10.1%	208
Արաբկիր	583	19.6%	697	11.9%	623
Կենտրոն	944	16.5%	1100	16.6%	943
Մալաթիա-Սեբաստիա	469	14.7%	538	19.0%	452
Քանաքեռ-Զեյթուն	233	82.0%	424	34.6%	315
Շենգավիթ	491	7.3%	527	9.8%	480
Նոր-Նորք	424	14.4%	485	-2.6%	498
Նորք-Մարաշ	31	51.6%	47	74.1%	27
Նուբարաշեն	23	30.4%	30	36.4%	22
Երևան	4267	20.2%	5129	13.7%	4512

1.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի մարտին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 39.8% գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.7% օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-2

Հ/Հ	Գործարքի տեսակը	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	Օտարում	1549	31.6%	2039	17.9%	1729
1ա	Առուվաճառք	1216	18.2%	1437	14.4%	1256
1բ	Նվիրատվություն	332	48.8%	494	16.2%	425
1գ	Փոխանակում	1	4.0 անգամ	4	0.0%	0
1ե	Օտարման այլ տեսակ	-	-	104	2.2 անգամ	48
2	Վարձակալում	369	22.2%	451	22.2%	369
3	Գրավադրում	1169	20.9%	1413	35.7%	1041
4	Ժառանգում	460	4.8%	482	-2.2%	493
5	Օրինականացում	29	27.6%	37	-14.0%	43
6	Առաջնայինգրանցում	336	15.8%	389	-11.2%	438
7	Պետգր. /վերագրանցում/	355	-10.4%	318	-20.3%	399
	Ընդամենը գործարք	4267	20.2%	5129	13.7%	4512

1.2.3 Երևան քաղաքում 2018 թվականի մարտին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 58.5% գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 3.1% արտադրական նշանակության շինություններին նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի մարտին, Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ .


Աղյուսակ 1.2-3

Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	բազմաբնակարան շենքի բնակարան	2429	23.6%	3002	18.8%	2526
2	անհատական բնակելի տուն	590	17.5%	693	7.1%	647
3	արտադրական նշ. շին	126	26.2%	159	29.3%	123
4	հասարակական նշ. շին.	666	9.8%	731	8.1%	676
5	ավտոտնակ	244	29.5%	316	-6.5%	338
6	հող	212	7.5%	228	12.9%	202
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	33	-18.2%	27	-3.6%	28
	Ընդամենը	4267	20.2%	5129	13.7%	4512

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2018 թվականի մարտին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 34.1% գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.1% օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	Օտարում	2430	28.2%	3115	2.4%	3042
1ա	Առուվաճառք	1646	32.1%	2174	1.7%	2137
1բ	Նվիրատվություն	776	12.8%	875	7.8%	812
1գ	Փոխանակում	8	-25.0%	6	-45.5%	11
1ե	Օտարման այլ տեսակ	-	-	60	-26.8%	82
2	Վարձակալում	352	7.1%	377	3.3%	365
3	Գրավադրում	952	24.3%	1183	31.9%	897
4	Ժառանգում	1234	31.4%	1621	-3.2%	1674
5	Օրինականացում	52	86.5%	97	42.6%	68
6	Առաջնային գրանցում	1675	16.2%	1946	32.8%	1465
7	Պետգր. /վերագրանցում/	406	94.6%	790	15.8%	682
	Ընդամենը գործարք	7101	28.6%	9129	11.4%	8193

1.3.2 Մարզերում 2018 թվականի մարտին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 51.1% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.0% ավտոտնակների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի մարտին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի մարտին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.3-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	բազմաբնակարան շենքի բնակարան	1155	11.9%	1293	9.8%	1178
2	անհատական բնակելի տուն	1901	16.7%	2218	2.3%	2169
3	արտադրական նշ. շին	349	-30.4%	243	24.6%	195
4	հասարակական նշ. շին.	436	42.2%	620	31.9%	470
5	ավտոտնակ	73	28.8%	94	4.4%	90
6	հող	3187	46.3%	4661	13.9%	4091
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1924	58.4%	3047	12.6%	2706
Ընդամենը		7101	28.6%	9129	11.4%	8193


2. ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2018 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 5154 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 36.1%-ը:

2009-2018 թվականների մարտ ամսվա անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.


Գծապատկեր 2.1-1




2.1.2 Հանրապետությունում 2018 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 39.6%, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.2%:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի:

Գծապատկեր 2.1-2



Գծապատկեր 2.1-3



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:

	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Երևան	1549	31.6%	2039	17.9%	1729
Արագածոտն	205	17.6%	241	6.2%	227
Արարատ	328	38.7%	455	-5.6%	482
Արմավիր	310	25.5%	389	-5.1%	410
Գեղարքունիք	239	18.8%	284	-15.7%	337
Լոռի	233	37.3%	320	7.7%	297
Կոտայք	452	46.9%	664	9.8%	605
Շիրակ	297	-8.4%	272	-2.9%	280
Սյունիք	145	65.5%	240	36.4%	176
Վայոցձոր	54	18.5%	64	0.0%	64
Տավուշ	167	11.4%	186	13.4%	164
Հանրապետություն	3979	29.5%	5154	8.0%	4771


2018 թվականի մարտին հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 8.0%-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 29.5%-ով, Երևան քաղաքում՝ 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 17.9%-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 31.6%-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 2018 թվականի փետրվարի համեմատ նվազել է 0.8%-ով, 2017 թվականի մարտի համեմատ աճել է 11.1%-ով իսկ գյուղական բնակավայրերում՝ 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 4.4%-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 40.9%-ով:


2.1.3 Հանրապետությունում 2018 թվականի մարտին օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.0% գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.3% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված են 2018 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 2.1-4

Հանրապետությունում օտարման գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի






Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի մարտին անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի:

Աղյուսակ 2.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բազմաբնակարան շենքի բնակարան	1960	38.0%	1376	67.5%	70.2%	550	47.7%	28.1%	34	1.7%	1.7%
2	անհատական բնակելի տուն	845	16.4%	203	10.0%	24.0%	203	17.6%	24.0%	439	22.4%	52.0%
3	արտադրական նշ. շին.	69	1.3%	26	1.3%	37.7%	12	1.0%	17.4%	31	1.6%	44.9%
4	հասարակական նշ. շին.	279	5.4%	148	7.3%	53.0%	92	8.0%	33.0%	39	2.0%	14.0%
5	ավտոտնակ	204	4.0%	153	7.5%	75.0%	42	3.6%	20.6%	9	0.5%	4.4%
6	հող	1797	34.9%	133	6.5%	7.4%	253	22.0%	14.1%	1411	71.9%	78.5%
6ա	Այդ թվում գյուղ.նշ.հող	1086	21.1%	8	0.4%	0.7%	97	8.4%	8.9%	981	50.0%	90.3%
	Ընդամենը գործարք	5154	100.0%	2039	100.0%	39.6%	1152	100.0%	22.4%	1963	100.0%	38.1%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոցձոր	Տավուշ	Մարզերը	Ընդամենը
Առուվաճառք	1437	151	327	294	161	208	487	190	171	48	137	2174	3611
Նվիրատվություն	494	90	121	92	114	94	171	76	59	16	42	875	1369
Փոխանակում	4	0	2	0	2	2	0	0	0	0	0	6	10
Օտարման այլ տեսակ	104	0	5	3	7	16	6	6	10	0	7	60	164
Ընդամենը	2039	241	455	389	284	320	664	272	240	64	186	3115	5154


3. ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2018 թվականի մարտին հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 3611 գործարք:

2009-2018 թվականների մարտ ամսվա անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.


Գծապատկեր 3.1-1




3.1.2 Հանրապետությունում 2018 թվականի մարտին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 39.8%, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.3%:

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված են 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.

Հանրապետությունում առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը



Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը



Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 3.1-1


	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Երևան	1216	18.2%	1437	14.4%	1256
Արագածոտն	136	11.0%	151	-1.9%	154
Արարատ	247	32.4%	327	-13.5%	378
Արմավիր	236	24.6%	294	-4.5%	308
Գեղարքունիք	97	66.0%	161	-12.0%	183
Լոռի	183	13.7%	208	5.6%	197
Կոտայք	343	42.0%	487	1.7%	479
Շիրակ	191	-0.5%	190	0.5%	189
Սյունիք	91	87.9%	171	50.0%	114
Վայոցձոր	41	17.1%	48	-2.0%	49
Տավուշ	81	69.1%	137	59.3%	86
Հանրապետություն	2862	26.2%	3611	6.4%	3393

2018 թվականի մարտին հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 6.4%-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 26.2%-ով, Երևան քաղաքում՝ 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 14.4 %-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 18.2%-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 2018 թվականի փետրվարի համեմատ նվազել է 4.0%-ով, 2017 թվականի մարտի համեմատ աճել՝ 11.6%-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 5.5%-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 48.3%-ով:


3.1.3 Հանրապետությունում 2018 թվականի մարտին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.8% գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.5% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և Գծապատկեր 3.1-5-ում ներկայացված են 2018 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների:

Հանրապետությունում առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ

Աղյուսակ 3.1-2


Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի մարտ	փոփոխում ը	2018 թվականի մարտ	փոփոխում ը	2018 թվականի փետրվար
1	քնակարան	1153	21.4%	1400	18.4%	1182
2	անհատական քնակելի տուն	372	22.0%	454	-4.4%	475
3	արտադրական նշ. շին	44	25.0%	55	25.0%	44
4	հասարակական նշ. շին.	170	16.5%	198	34.7%	147
5	ավտոտնակ	128	21.1%	155	-22.1%	199
6	հող	995	35.6%	1349	0.2%	1346
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	558	42.7%	796	1.9%	781
	Ընդամենը	2862	26.2%	3611	6.4%	3393

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի մարտին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել քարճրտոկոսաչափնարձանագրվել է Կենտրոն 20.3%, իսկ առավել ցածրը՝ 0.3-ական% Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Երևան քաղաքում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Դավթաշեն	65	36.9%	89	53.4%	58
Էրեբունի	78	-5.1%	74	2.8%	72
Աջափնյակ	123	13.8%	140	22.8%	114
Ավան	50	36.0%	68	6.3%	64
Արաբկիր	172	24.4%	214	0.0%	214
Կենտրոն	264	-4.2%	253	-19.4%	314
Մալաթիա-Սեբաստիա	141	17.7%	166	45.6%	114
Քանաքեռ-Զեյթուն	53	107.5%	110	50.7%	73
Շենգավիթ	143	11.9%	160	40.4%	114
Նոր-Նորք	116	32.8%	154	40.0%	110
Նորք-Մարաշ	3	33.3%	4	33.3%	3
Նուբարաշեն	8	-37.5%	5	-16.7%	6
Երևան	1216	18.2%	1437	14.4%	1256

3.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի մարտին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 67.6% գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.4% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-2


Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	բնակարան	808	20.2%	971	20.9%	803
2	անհատական բնակելի տուն	106	15.1%	122	4.3%	117
3	արտադրական նշ. շին	21	-4.8%	20	122.2%	9
4	հասարակական նշ. շին.	95	4.2%	99	30.3%	76
5	ավտոտնակ	97	17.5%	114	-27.4%	157
6	հող	89	24.7%	111	18.1%	94
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	9	-44.4%	5	-16.7%	6
Ընդամենը		1216	18.2%	1437	14.4%	1256

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2018 թվականի մարտին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 56.9% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.6% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ.

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	բնակարան	345	24.3%	429	13.2%	379
2	անհատական բնակելի տուն	266	24.8%	332	-7.3%	358
3	արտադրական նշ. շին	23	52.2%	35	0.0%	35
4	հասարակական նշ. շին.	75	32.0%	99	39.4%	71
5	ավտոտնակ	31	32.3%	41	-2.4%	42
6	հող	906	36.6%	1238	-1.1%	1252
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	549	44.1%	791	2.1%	775
Ընդամենը		1646	32.1%	2174	1.7%	2137


3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2018 թվականի մարտին անշարժ գույքի 390 առուվաճառքի գործարքների կողմ հանդիսացել են իրավաբանական անձինք, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 10.8%-ը :

Վերոնշյալ առուվաճառքի գործարքներից 147-ի դեպքում իրավաբանական անձինք հանդիսացել են միայն գնորդ, 179-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 32 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են իրավաբանական անձինք :

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված են իրավաբանական անձանց կողմից 2018 թվականի մարտին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունները .


Գծապատկեր 3.4-1




Արդյունքում 2018 թվականի մարտին իրավաբանական անձինք գնել են 179 միավոր անշարժ գույք և վաճառել են 211 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է իրավաբանական անձանց կողմից 2018 թվականի մարտին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.4-3-ում՝ իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Գծապատկեր 3.4-2



Գծապատկեր 3.4-3



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը Հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում՝ ըստ Երևանի և մարզերի:

Աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	1437	68	38.0%	4.7%	171	81.0%	11.9%
Արագածոտն	151	13	7.3%	8.6%	0	0.0%	0.0%
Արարատ	327	5	2.8%	1.5%	1	0.5%	0.3%
Արմավիր	294	5	2.8%	1.7%	3	1.4%	1.0%
Գեղարքունիք	161	0	0.0%	0.0%	3	1.4%	1.9%
Լոռի	208	10	5.6%	4.8%	9	4.3%	4.3%
Կոտայք	487	45	25.1%	9.2%	9	4.3%	1.8%
Շիրակ	190	2	1.1%	1.1%	5	2.4%	2.6%
Սյունիք	171	8	4.5%	4.7%	7	3.3%	4.1%
Վայոց Ձոր	48	2	1.1%	4.2%	0	0.0%	0.0%
Տավուշ	137	21	11.7%	15.3%	3	1.4%	2.2%
Հանրապետություն	3611	179	100.0%	5.0%	211	100.0%	5.8%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվարամսվա նկատմամբ:

Աղյուսակ 3.4-2

	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Երևան	68	19.3%	57	171	-20.1%	214
Արագածոտն	13	-35.0%	20	0	6-ով պակաս	6
Արարատ	5	-75.0%	20	1	-96.0%	25
Արմավիր	5	5.0 անգամ	1	3	-75.0%	12
Գեղարքունիք	0	10-ով պակաս	10	3	-70.0%	10
Լոռի	10	-54.5%	22	9	-60.9%	23
Կոտայք	45	-48.9%	88	9	-52.6%	19
Շիրակ	2	-50.0%	4	5	-68.8%	16
Սյունիք	8	60.0%	5	7	-46.2%	13
Վայոց Ձոր	2	-50.0%	4	0	2-ով պակաս	2
Տավուշ	21	61.5%	13	3	-66.7%	9
Հանրապետություն	179	-26.6%	244	211	-39.5%	349

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված է 2018 թվականի մարտին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը Հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում՝ ըստ գույքի տեսակների:

Աղյուսակ 3.4-3

	Գույքի տեսակ	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	1400	30	16.8%	2.1%	106	50.2%	7.6%
2	անհատական բնակելի տուն	454	25	14.0%	5.5%	10	4.7%	2.2%
3	արտադրական նշ. շին	55	10	5.6%	18.2%	15	7.1%	27.3%
4	հասարակական նշ. շին.	198	16	8.9%	8.1%	33	15.6%	16.7%
5	ավտոտնակ	155	2	1.1%	1.3%	26	12.3%	16.8%
6	հող	1349	96	53.6%	7.1%	21	10.0%	1.6%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	796	79	44.1%	9.9%	3	1.4%	0.4%
Ընդամենը		3611	179	100.0%	5.0%	211	100.0%	5.8%

Աղյուսակ 3.4-4-ում ներկայացված է 2018 թվականի մարտին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար ամսվա նկատմամբ՝ ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 3.4-4

	Գույքի տեսակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		2018 թվականի մարտ	փոփոխում ը	2018 թվականի փետրվար	2018 թվականի մարտ	փոփոխում ը	2018 թվականի փետրվար
1	բնակարան	30	7.1%	28	106	-5.4%	112
2	անհատական բնակելի տուն	25	31.6%	19	10	-67.7%	31
3	արտադրական նշ. շին	10	-9.1%	11	15	-37.5%	24
4	հասարակական նշ. շին.	16	2.0 անգամ	8	33	-32.7%	49
5	ավտոտնակ	2	-89.5%	19	26	-71.7%	92
6	հող	96	-39.6%	159	21	-48.8%	41
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	79	-38.3%	128	3	-90.6%	32
Ընդամենը		179	-26.6%	244	211	-39.5%	349


3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2018 թվականի մարտին անշարժ գույքի 276 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 10.7%-ը:

Առուվաճառքի գործարքներից 73-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 196-ի դեպքում միայն վաճառող, իսկ 7 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ:


Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2018 թվականի մարտին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը.

Գծապատկեր 3.5-1




Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2018 թվականի մարտին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.5-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված գույքերի
բաշխվածությունը ըստ տեսակների



Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված
գույքերի բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառների գործարքներում՝ ըստ Երևանի և մարզերի.

Աղյուսակ 3.5-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	1437	75	68.8%	5.2%	113	40.9%	7.9%
Արագածոտն	151	4	3.7%	2.6%	10	3.6%	6.6%
Արարատ	327	4	3.7%	1.2%	21	7.6%	6.4%
Արմավիր	294	7	6.4%	2.4%	31	11.2%	10.5%
Գեղարքունիք	161	3	2.8%	1.9%	13	4.7%	8.1%
Լոռի	208	1	0.9%	0.5%	12	4.3%	5.8%
Կոտայք	487	10	9.2%	2.1%	25	9.1%	5.1%
Շիրակ	190	2	1.8%	1.1%	19	6.9%	10.0%
Սյունիք	171	3	2.8%	1.8%	12	4.3%	7.0%
Վայոց Ձոր	48	0	0.0%	0.0%	1	0.4%	2.1%
Տավուշ	137	0	0.0%	0.0%	19	6.9%	13.9%
Հանրապետություն	3611	109	100.0%	3.0%	276	100.0%	7.6%

Աղյուսակ 3.5-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար ամսվա նկատմամբ.

Աղյուսակ 3.5-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Երևան	75	2.7%	73	113	0.9%	112
Արագածոտն	4	4.0 անգամ	1	10	42.9%	7
Արարատ	4	-33.3%	6	21	-32.3%	31
Արմավիր	7	75.0%	4	31	24.0%	25
Գեղարքունիք	3	50.0%	2	13	-38.1%	21
Լոռի	1	-83.3%	6	12	-47.8%	23
Կոտայք	10	-16.7%	12	25	25.0%	20
Շիրակ	2	0.0%	2	19	-13.6%	22
Սյունիք	3	3.0 անգամ	1	12	33.3%	9
Վայոց Ձոր	0	1-ով պակաս	1	1	-90.0%	10
Տավուշ	0	1-ով պակաս	4	19	2.1 անգամ	9
Հանրապետություն	109	-2.7%	112	276	-4.5%	289

Աղյուսակ 3.5-3-ում ներկայացված է 2018 թվականի մարտին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը Հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում՝ ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-3

		Առուվաճառ քի գործարքնե րի քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
			քան ակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	1400	61	56.0%	4.4%	158	57.2%	11.3%
2	անհատական բնակելի տուն	454	13	11.9%	2.9%	43	15.6%	9.5%
3	արտադրական նշ. շին	55	2	1.8%	3.6%	1	0.4%	1.8%
4	հասարակական նշ. շին.	198	7	6.4%	3.5%	7	2.5%	3.5%
5	ավտոտնակ	155	10	9.2%	6.5%	5	1.8%	3.2%
6	հող	1349	16	14.7%	1.2%	62	22.5%	4.6%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	796	0	0.0%	0.0%	43	15.6%	5.4%
Ընդամենը		3611	109	100.0%	3.0%	276	100.0%	7.6%

Աղյուսակ 3.5-4-ում ներկայացված է 2018 թվականի մարտին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար ամսվա նկատմամբ՝ ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 3.5-4

	Գույքի տեսակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		2018 թվակա նի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար	2018 թվականի մարտ	փոփոխում ը	2018 թվականի փետրվար
1	բնակարան	61	-6.2%	65	158	17.9%	134
2	անհատական բնակելի տուն	13	-27.8%	18	43	-39.4%	71
3	արտադրական նշ. շին	2	0.0%	2	1	1-ով ավել	0
4	հասարակական նշ. շին.	7	40.0%	5	7	2.3 անգամ	3
5	ավտոտնակ	10	-9.1%	11	5	-54.5%	11
6	հող	16	45.5%	11	62	-11.4%	70
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	0	0.0%	0	43	-8.5%	47
Ընդամենը		109	-2.7%	112	276	-4.5%	289

Աղյուսակ 3.5-5-ում ներկայացված են 2018 թվականի մարտին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ Աղյուսակ 3.5-6-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

Աղյուսակ 3.5-5

h/h	Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադր. նշան	Հասար. նշան	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ.	Ընդամենը
1	Ռուսաստանի Դաշնություն	42	3	1	3	7	7	0	63
2	ԱՄՆ	7	2	0	2	1	2	0	14
3	Իրան	1	1	0	1	1	1	0	5
4	Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
5	Եվրոպական պետություններ	5	2	1	0	0	1	0	9
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	2	1	0	0	0	0	0	3
7	Այլ պետություններ	4	4	0	1	1	5	0	15
	ԸՆԴԱՄԵՆԸ	61	13	2	7	10	16	0	109

Աղյուսակ 3.5-6

h/h	Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադր. նշան	Հասար. նշան	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ.	Ընդամենը
1	Ռուսաստանի Դաշնություն	139	36	0	6	5	52	36	238
2	ԱՄՆ	2	3	0	1	0	1	1	7
3	Իրան	3	0	1	0	0	2	2	6
4	Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
5	Եվրոպական պետություններ	4	1	0	0	0	2	0	7
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	5	2	0	0	0	4	3	11
7	Այլ պետություններ	5	1	0	0	0	1	1	7
	ԸՆԴԱՄԵՆԸ	158	43	1	7	5	62	43	276

Աղյուսակ 3.5-7-ում ներկայացված է 2018 թվականի մարտին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար ամսվա նկատմամբ՝ ըստ պետությունների և տարածաշրջանների.

Աղյուսակ 3.5-7


Պետության անվանումը		Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
1	Ռուսաստանի Դաշնություն	63	-12.5%	72	238	5.3%	226
2	ԱՄՆ	14	75.0%	8	7	-61.1%	18
3	Իրան	5	0.0%	5	6	200.0%	2
4	Սիրիա	0	1-ով պակաս	1	0	2-ով պակաս	2
5	Եվրոպական պետություններ	9	12.5%	8	7	-30.0%	10
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	3	-57.1%	7	11	-35.3%	17
7	Այլ պետություններ	15	36.4%	11	7	-50.0%	14
	ԸՆԴԱՄԵՆԸ	109	-2.7%	112	276	-4.5%	289

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2018 թվականի մարտին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1400 գործարք: 2018 թվականի մարտին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 18.4%-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 21.4%-ով:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի:

Գծապատկեր 3.6-1




Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:

	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Երևան	808	20.2%	971	20.9%	803
Արագածոտն	11	18.2%	13	2.2 անգամ	6
Արարատ	26	26.9%	33	-8.3%	36
Արմավիր	33	12.1%	37	-21.3%	47
Գեղարքունիք	26	-15.4%	22	10.0%	20
Լոռի	51	33.3%	68	6.3%	64
Կոտայք	80	53.8%	123	16.0%	106
Շիրակ	67	-1.5%	66	6.5%	62
Սյունիք	30	36.7%	41	70.8%	24
Վայոցձոր	7	-14.3%	6	0.0%	6
Տավուշ	14	42.9%	20	2.5 անգամ	8
Հանրապետություն	1153	21.4%	1400	18.4%	1182

3.6.2 Երևան քաղաքում 2018 թվականի մարտին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 971 գործարք, 2018 թվականի մարտին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 20.9%-ով, իսկ 2017 թվականի մարտի համեմատ՝ 20.2%-ով:

Երևան քաղաքում 2018 թվականի մարտին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 16.8%, իսկ առավել ցածրը 0.3% Նուբարաշեն վարչական շրջաններում: Նորք-Մարաշ վարչական շրջանում առուվաճառքի գործարքներ չեն գրանցվել:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2018 թվականի մարտին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով՝ ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների.

Աղյուսակ 3.6-2

Վարչական շրջան	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Կենտրոն միջին	428250	17.0%	500900	2.8%	487200
Կենտրոն 1գոտի		N/A	624700	0.3%	623000
Կենտրոն 2 գոտի		N/A	481200	0.6%	478200
Կենտրոն 3 գոտի		N/A	425500	-3.3%	440200
Կենտրոն 4 գոտի		N/A	374700	N/A	N/A
Կենտրոն 5 գոտի		N/A	338100	-0.6%	340000
Արաբկիր միջին	357000	-0.1%	356600	-0.6%	358800
Արաբկիր 3գոտի		N/A	426100	0.3%	425000
Արաբկիր 4գոտի		N/A	373500	0.4%	372100

Արաբկիր 5գոտի		N/A	332000	0.3%	331000
Արաբկիր 6գոտի		N/A	223000	0.0%	223000
Քանաքեռ-Զեյթուն միջին	276000	-1.3%	272500	0.5%	271100
Քանաքեռ-Զեյթուն 4գոտի		N/A	320000	-3.0%	330000
Քանաքեռ-Զեյթուն 5գոտի		N/A	311500	-2.7%	320000
Քանաքեռ-Զեյթուն 6գոտի		N/A	285100	2.1%	279100
Քանաքեռ-Զեյթուն 7գոտի		N/A	215000	0.0%	215000
Նոր-Նորք միջին	249000	-3.3%	240750	1.6%	237050
Նոր-Նորք 6 գոտի		N/A	257700	-1.8%	262300
Նոր-Նորք 7 գոտի		N/A	221000	1.4%	218000
Էրեբունի միջին	245450	1.3%	248550	2.5%	242550
Էրեբունի 5 գոտի		N/A	286300	0.5%	285000
Էրեբունի 6 գոտի		N/A	260000	1.2%	257000
Էրեբունի 7 գոտի		N/A	238100	N/A	N/A
Էրեբունի 8 գոտի		N/A	200000	0.0%	200000
Շենգավիթ միջին	250200	0.7%	251900	1.3%	248700
Շենգավիթ 5 գոտի		N/A	276800	1.4%	273000
Շենգավիթ 6 գոտի		N/A	262200	0.1%	262000
Շենգավիթ 7 գոտի		N/A	237400	1.5%	234000
Շենգավիթ 8 գոտի		N/A	195000	7.7%	181050
Դավթաշեն միջին	265350	4.8%	278050	1.1%	275050
Դավթաշեն 7 գոտի		N/A	278050	1.1%	275050
Աջափնյակ միջին	247100	0.4%	248000	4.0%	238500
Աջափնյակ 4 գոտի		N/A	266000	0.4%	265000
Աջափնյակ 6 գոտի		N/A	272900	-1.5%	277000
Աջափնյակ 7 գոտի		N/A	223600	1.6%	220000
Աջափնյակ 8 գոտի		N/A	231200	2.3%	226000
Մալաթիա-Սեբաստիա միջին	238000	-0.3%	237300	0.4%	236300
Մալաթիա –Սեբաստիա 6 գոտի		N/A	286000	-1.0%	289000
Մալաթիա –Սեբաստիա 7 գոտի		N/A	233000	0.0%	233000
Մալաթիա –Սեբաստիա 8 գոտի		N/A	200000	5.3%	190000
Ավան միջին	256500	-0.9%	254200	0.4%	253200
Ավան 6 գոտի		N/A	207000	1.0%	205000
Ավան 7 գոտի		N/A	255000	-2.7%	262000
Նուբարաշեն միջին	157700	1.6%	160200	2.0%	157100
Նուբարաշեն 9		N/A	160200	2.0%	157100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի մարտիներևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2018 թվականի փետրվարի համեմատ՝ աճել են 1.5%-ով, իսկ 2017 թվականի մարտի համեմատ՝ աճել 2.6%-ով:

Ծանոթություն

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 17.04.2003թ. N470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման գոտիների:

*Մալաթիա-Սեբաստիա համայնքի 6-րդ գոտում ընդգրկված է Ծիծեռնակաբերդի խճուղին

*Ավան համայնքի 7-րդ գոտում ընդգրկված է Ծարավ Աղբյուրի փողոցը

*Աջափնյակ համայնքի 8-րդ գոտում ընդգրկված է Վահագնի թաղամասը

Վերոնշյալ փողոցներն ու թաղամասերն էական ազդեցություն ենթողնում տվյալ գոտում ձևավորվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական գների վրա:


*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

3.6.3 2018 թվականի մարտին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 429 բնակարան, ընդ որում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 5.4%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի մարտին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 13.2%-ով, իսկ 2017 թվականի մարտի համեմատ նվազել՝ 19.6 %-ով:

Գծապատկեր 3.6-3-ում ներկայացված է 2018 թվականի մարտին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.6-3



Աղյուսակ 3.6-3-ում ներկայացված են 2018 թվականի մարտին մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ² մակերեսի հաշվարկով.


Մարզը	Քաղաքը	2018 թվականի մարտ
Արագածոտն	Աշտարակ	110400
	Ապարան	80100
	Թալին	66600
Արարատ	Արտաշատ	96400
	Մասիս	98050
	Վեդի	92300
	Արարատ	86500
Արմավիր	Վաղարշապատ	122000
	Արմավիր	91050
	Մեծամոր	66500
Գեղարքունիք	Սևան	83000
	Գավառ	54000
	Մարտունի	118000
	Վարդենիս	55000
	Ճամբարակ	38100
	Վանաձոր	77800
Լոռի	Ստեփանավան	67600
	Սպիտակ	91100
	Ալավերդի	50050
	Տաշիր	54400
	Թումանյան	23400
	Շամլուղ	28100
	Ախթալա	33100
	Արուսյան	156600
Կոտայք	Նոր Հաճն	127600
	Բյուրեղավան	97700
	Եղվարդ	115000
	Հրազդան	57000
	Ծաղկաձոր	276000
	Չարենցավան	70000
	Գյումրի	89300
Շիրակ	Արթիկ	68150
	Մարալիկ	51700
	Գորիս	130100
Սյունիք	Կապան	101000
	Սիսիան	79700
	Մեղրի	108500
	Քաջարան	100200
	Դաստակերտ	23100
	Վայք	86000
Վայոց ձոր	Եղեգնաձոր	119000
	Ջերմուկ	108200
	Դիլիջան	107100
Տավուշ	Իջևան	114700
	Բերդ	98700
	Նոյեմբերյան	55500
	Այրում	56900

3.7 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.7.1 Հանրապետությունում 2018 թվականի մարտին իրականացվել է հողերի առուվաճառքի 1349 գործարք, ընդ որում նշված առուվաճառքի գործարքների 27.6%-ը գրանցվել է պետական կամ համայնքային գույքի նկատմամբ: 2018 թվականի մարտին հանրապետությունում գրանցված հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 0.2%-ով, 2017 թվականի մարտի համեմատ՝ 35.6%-ով:

Գծապատկեր 3.7-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ երևանի և մարզերի:

Գծապատկեր 3.7-1



Աղյուսակ 3.7-1-ում ներկայացված է 2018 թվականի մարտին հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի փետրվար և 2017 թվականի մարտ ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 3.7-1

	2017 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի մարտ	փոփոխումը	2018 թվականի փետրվար
Երևան	89	24.7%	111	18.1%	94
Արագածոտն	101	13.9%	115	-9.4%	127
Արարատ	163	27.0%	207	-19.8%	258
Արմավիր	156	19.9%	187	-5.6%	198
Գեղարքունիք	39	2.7 անգամ	104	1.0%	103
Լոռի	87	-28.7%	62	-12.7%	71
Կոտայք	189	42.3%	269	-7.2%	290
Շիրակ	66	15.2%	76	7.0%	71
Սյունիք	31	3.1 անգամ	97	98.0%	49
Վայոցձոր	21	57.1%	33	-10.8%	37
Տավուշ	53	66.0%	88	83.3%	48
Հանրապետություն	995	35.6%	1349	0.2%	1346

3.7.2 Երևան քաղաքում 2018 թվականի մարտին իրականացվել է հողերի առուվաճառքի 111 գործարք, ընդ որում նշված առուվաճառքի գործարքների 2.8%-ը գրանցվել է պետական կամ համայնքային գույքի նկատմամբ: 2018 թվականի մարտին Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ աճել է 18.1 %-ով, իսկ 2017 թվականի մարտի համեմատ՝ 24.7 %-ով:

Գծապատկեր 3.7-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.7-2



2018 թվականի մարտին Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափին արձանագրվել է Մալաթիա-Սեբաստիա՝ 21.6 %, իսկ առավել ցածրը՝ 0.9%՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

2018 թվականի մարտին Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 111 գործարք՝ 7.91 հա ընդհանուր մակերեսով, որոնք ըստ նպատակային նշանակության բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 5 միավոր (0.34 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 48 միավոր (3.59 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 56 միավոր (3.68 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 2 միավոր (0.30 հա) մակերեսով:

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 34.2 %-ը կամ 38 միավոր՝ 1.18 հա ընդհանուր մակերեսով, հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 65.8 %-ը կամ 73 միավոր (6.73 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող:

Աղյուսակ 3.7-2-ում ներկայացված է 2018 թվականի մարտին Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն՝ ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-2

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր				Բնակավայրերի հողեր			
					Բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակա-կան կառուցապատ. հողեր						Բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակա-կան կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	2	0.09	1	0.06	0	0.00	0	0.00	3	0.22	2	0.11
Էրեբունի	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.04	0	0.00	0	0.00	1	0.12	1	0.08
Աջափնյակ	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.07	0	0.00	0	0.00	2	0.28	8	0.80
Ավան	0	0.00	0	0.00	1	0.003	2	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.09
Արաբկիր	0	0.00	0	0.00	1	0.03	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.34	2	0.14
Կենտրոն	0	0.00	0	0.00	1	0.02	2	0.02	0	0.00	0	0.00	5	1.17	5	0.12
Մալաթիա-Սեբաստիա	0	0.00	0	0.00	2	0.11	3	0.30	5	0.34	0	0.00	9	0.33	5	0.26
Քանաքեռ-Զեյթուն	0	0.00	0	0.00	1	0.05	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.01	2	1.27
Շենգավիթ	0	0.00	1	0.13	1	0.05	4	0.02	0	0.00	1	0.17	4	0.17	0	0.00
Նոր-Նորք	0	0.00	0	0.00	2	0.02	7	0.15	0	0.00	0	0.00	6	0.36	4	0.13
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	1	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.16	0	0.00
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.04	0	0.00
Ընդամենը	0	0.00	1	0.13	12	0.39	25	0.68	5	0.34	1	0.17	36	3.20	31	3.00

Աղյուսակ 3.7-3-ում ներկայացված է 2018 թվականի մարտին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-3


Վարչական շրջաններ	Ուղղակի վաճառք								Աճուրդային վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակա- կան կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Դավթաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.15	0	0.00	0	0.00	2	0.09	1	0.06
Էրեբունի	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	1	0.03	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.03
Աջափնյակ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.06	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.06
Ավան	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	2	0.016	0	0.00	0	0.00	1	0.003	1	0.013
Արաբկիր	1	0.03	0	0.00	1	0.03	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Կենտրոն	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	2	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.02
Մալաթիա-Սեբաստիա	3	0.111	0	0.00	2	0.11	1	0.001	2	0.30	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.30
Քանաքեռ-Զեյթուն	1	0.05	0	0.00	1	0.05	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Շենգավիթ	3	0.133	1	0.13	0	0.00	2	0.003	3	0.06	0	0.00	0	0.00	1	0.05	2	0.01
Նոր-Նորք	4	0.125	0	0.00	1	0.005	3	0.12	5	0.04	0	0.00	0	0.00	1	0.01	4	0.03
Նորք-Մարաշ	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Ընդամենը	16	0.51	1	0.13	7	0.24	8	0.14	22	0.68	0	0.00	0	0.00	5	0.15	17	0.52

3.7.3 Մարզերում 2018 թվականի մարտին իրականացվել է հողերի առուվաճառքի 1238 գործարք, ընդ որում նշված առուվաճառքի գործարքների 85.3%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում, իսկ 24.8%-ը՝ պետական կամ համայնքային գույքի նկատմամբ:

2018 թվականի մարտին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի փետրվարի համեմատ նվազել է 1.1%-ով, իսկ 2017 թվականի մարտի համեմատ աճել՝ 36.6%-ով:

Գծապատկեր 3.7-3-ում ներկայացված է 2018 թվականի մարտին մարզերում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.7-3



Մարզերում 2018 թվականի մարտին հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Կոտայքի՝ 21.7%, իսկ առավել ցածրը՝ 2.7% Վայոց Ձորի մարզերում: 2018 թվականի մարտին մարզերում իրականացվել է հողերի առուվաճառքի 1238 գործարք՝ 828.20 հա ընդհանուր մակերեսով, որոնք ըստ նպատակային նշանակության բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 791 միավոր (787.07 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 340 միավոր (31.16 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 81 միավոր (5.68 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 24 միավոր (4.21 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 1 միավոր (0.06 հա),

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 1 միավոր (0.02 հա) մակերեսով:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 289.32 հա, որից 280.41 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

